ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 25 >> 05 2018թ.

N:

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ շրջանավարտներ

Ի սրտե շնորհավորում եմ մայիսյան այս գեղեցիկ և բոլորիդ համար անմոռաց օրվա՝ Վերջին դասի առթիվ:

Այսօր ձեր կյանքում հիշարժան օր է, ոտք եք դնում դեպի մեծ կյանք՝ ազատ և անկաշկանդ մտածողությամբ, լի վառ երազանքներով և ապագայի հանդեպ լուսավոր նպատակներով:

Վստահ եմ անցած տարիներին ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները, ազգային դաստիարակությունը, ընկերական պարզ ու անաղարտ հարաբերությունները կօգնեն ձեզ ճիշտ ճանապարհ ընտրել կյանքում և պատվով անցնել այն՝ արդարացնելով ծնողների և ուսուցիչների ակնկալիքները:

Ողջունում եմ նաև ուսուցիչներին և ծնողներին: Դուք այսօր կյանք եք ճանապարհում հասուն, կազմակերպված մի սերունդ, որն իր աշխատանքով ու ներդրումով դառնալու է մեր երկրի հզորացման հուսալի երաշխավորը:

Սիրելի շրջանավարտներ

Մեկ անգամ՝ ևս շնորհավորելով ձեզ, ուսուցիչներին, ծնողներին, մաղթում եմ քաջառողջություն, երջանիկ կյանք, կանաչ ճանապարհ, և թող հաջողությունը մշտապես ուղեկցի ձեզ կյանքում:

Բարի երթ Ձեզ

Թո՛ղ իրականանան ձեր բոլոր իղձերն ու նպատակները:

Ս.ՊԵՏՐՈՍՅԱՆ
պարտականությունները կատարող